ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 6 նիստի, կայացած 2024թ օգոստոսի 19-ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներից 6-ը, ինչպես նաև Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դավիթ Հարությունյանը, որը ըստ կարգի հանդիսանում է հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Միքաելյան / մարզպետ /
քարտուղար՝ Մ. Մեսրոպյան
անդամներ՝ Գ. Մարգարյան
Ա. Ղազարյան
Հ. Նազարյան
Է.Հովհաննիսյան
Դ.Հարությունյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի 1 միավոր քաղաքացիների համասեփականություն հանդիսացող 0.216հա /ծածկագիր 10-042-0136-0015/ պտղատու այգին փոխադրել վարելահողի, չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Կ. Միքաելյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքը փաստացի վարելահող է, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը 0.216հա /ծածկագիր 10-042-0136-0015/ տարածքը, որը հանդիսանում է քաղաքացիների համասեփականություն՝ դասել վարելահողերի շարքին:

Առաջարկվեց Եղեգնաձոր համայնքի ղեկավարին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալից՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի 1 միավոր 0.216ա /ծածկագիր 10-042-0136-0015/ քաղաքացիների համասեփականության իրավունքով պատկանող պտղատու այգին փոխադրել վարելահողի, չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակ տրամադրել՝ հողամասերի սեփականատիրոջը, համայնքի ղեկավարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Քարտուղար՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ